# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով հատուկ նշանակության էլեկտրական ապրանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/40» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.09.2023թ., ժամը 10-30-ին ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Էդգար Ալեքսանյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Վարդան Ջանոյանը, Սուրեն Մուշեղյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

*Օրակարգ*

***<u>Աճուրդի արդյունքների ամփոփում և գնահատում</u>***

**1. Աճուրդի մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/40» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները.

1. Enigma Systemy Ochrony Informacji Sp. z o.o. /Լեհաստանի Հանրապետություն, ք. Վարշավա, փ. Յուաշենկի 116, 02-230 /
2. ԴՈՆԵՌ ՍՊԸ /ք. Երևան, Գայի 51/5/

**2. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Enigma Systemy Ochrony Informacji Sp. z o.o.-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը բավարարում է հրավերի պահանջներին, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում բոլոր իրական շահառուների «իրական շահառու հանդիսանալու հիմքերը» լրացված չեն, 1-ին և 2-րդ չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագիրը հստակ ներկայացված չէ և կան հրավերի պահանջների հետ անհամապատասխանություններ:

**4. Հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների առաջարկած գները և նախահաշվային գինը**

| չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը |
|---|---|
| 1 | *հատուկ նշանակության էլեկտրական ապրանքներ/Ներփնային վերահսկման սարք/* |
| 2 | *հատուկ նշանակության էլեկտրական ապրանքներ/էլեկտրոնային հսկողության շղթա/* |

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | 1 | Enigma Systemy Ochrony Informacji Sp. z o.o. | 0 AMD | 455989356 AMD | 0% | 455989356.00 AMD | - |
| 1 | 2 | ԴՈՆԵՌ ՍՊԸ | 0 AMD | 200000000000 AMD | 20% | 240000000000.00 AMD | - |
| 2 | 1 | Enigma Systemy Ochrony Informacji Sp. z o.o. | 0 AMD | 190089855 AMD | 0% | 190089855.00 AMD | - |
| 2 | 2 | ԴՈՆԵՌ ՍՊԸ | 0 AMD | 200000000000 AMD | 20% | 240000000000.00 AMD | - |

**5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

5.1 Հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել 2023թ. հոկտեմբերի 03-ին, ժամը 10:30-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

**Քարտուղարին՝**

Eauction.armeps.am համակարգի միջոցով այսօր տեղեկացնել Enigma Systemy Ochrony Informacji Sp. z o.o.-ին անհամապատասխանությունների վերաբերյալ և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ _______________ Էդգար Ալեքսանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _______________ Վարդան Ջանոյան

_______________ Սուրեն Մուշեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _______________ Մարինե Մուրադյան